

«Ուիքի Ճամբար»ը Ֆրանսայի մէջ

Ուրախութեամբ կը հաղորդենք, որ Սփիւռքի երրորդ «Ուիքի Ճամբար»ը այս տարի տեղի պիտի ունենայ ֆրանսայի մէջ:

Ճամբարը պիտի կազմակերպուի Լա Պուրպուլ (La Bourboule) գիւղաքաղաքի "Gîte François et Suzon" երիտասարդական կայանի մը սահմաններէն ներս, Օգոստոս 12էն մինչեւ Օգոստոս 20: Ութը օրուան ընթացքին, մասնակիցները ո՛չ միայն զիրենք հետաքրքրող նիւթերու շուրջ արեւմտահայերէն յօդուածներ գրելու առիթը պիտի ունենան, այլեւ բազմաթիւ բացօթեայ մարզախաղերու պիտի մասնակցին: Առաւել եւս՝ Միջին Արեւելքէն, Հիւսիսային Ամերիկայէն եւ Եւրոպայի չորս ծագերէն ժամանած նոր բարեկամներու պիտի հանդիպին եւ յիշատակելի շաբաթ մը պիտի անցնեն միասնաբար:

Նախանցեալ տարի՝ «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան Հայկական Համայնքներու բաժանմունքը եւ «Ուիքիմետիա Հայաստան»

կազմակերպութիւնը միասնաբար սկսան Սփիւռքի մէջ արեւմտահայերէն «Ուիքի Ճամբար» ձեռնարկը: Արեւմտահայերէնով առաջին «Ուիքի Ճամբար»ը տեղի ունեցաւ 2015ի Օգոստոս 3էն մինչեւ Օգոստոս 12, Պէյրութի մէջ, աւելի քան վաթսուն մասնակիցներով (աշակերտներ, ուսուցիչներ եւ տեղեկատուական արհեստագիտութեան մասնագէտներ): Իսկ երկրորդ «Ուիքի Ճամբար»ը տեղի ունեցաւ 2016ի Օգոստոս 17էն մինչեւ Օգոստոս 26, Քատավալի (Լիզպոն) մէջ, աւելի քան 58 մասնակիցներով (աշակերտներ, ուսուցիչներ): Ճամբարի ընթացքին, աշակերտները առիթը ունեցան իրենց կարողութիւնն ու ինքնավստահութիւնը զարգացնելու թէ՛ «Ուիքիփետիա»յի յօդուածներ գրելով ու խմբագրելով եւ թէ՛ արեւմտեան լեզուներէ յօդուածներ թարգմանելով: 2015ի սկիզբը, «Ուիքիփետիա»ն արեւմտահայերէն 650 յօդուած ունէր: Տարի մը ետք՝ 2016ի սկիզբը, այդ թիւը բարձրացած էր 3546ի: Իսկ 2017ի սկիզբը, այդ թիւը բարձրացած է 5565ի: Այս նկատելի աճումին գլխաւոր պատճառը պատանիներու համար կազմակերպուած «Ուիքի Ճամբար»ը

եղաւ, որ բորորին համար հաճելի, խանդավառ եւ աշխատունակ մթնոլորտ մը ստեղծեց:

Ֆրանսայի Ճամբարը ուղղուած է 16էն 25 տարեկան երիտասարդներու:
Հետաքրքրուող անձերը պէտք է «Ուիքի Ճամբար Ֆրանսա» հարցաթերթիկը ամբողջացնեն եւ ներկայացնեն մինչեւ Ապրիլ 10: Տրամադրելի տեղերու թիւը սահմանափակ է եւ կ'ակնալենք, որ շատ դիմողներ պիտի ըլլան:

Ֆրանսայի «Ուիքի Ճամբար»ին մասին յաւելեալ տեղեկութիւններ քաղելու համար, հաճեցէք [սեղմել այստեղ](#) (տեղեկութիւնը միայն հայերէնով տրամադրելի է): Դիմումնագիրը ձեռք բերելու համար, հաճեցէք [սեղմել այստեղ](#):